ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 N 138

13 դեկտեմբերի 2013թ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՌԿԱ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԱՐԱԾ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997թ. մայիսի 6-ի N-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարար, փոխվարչապետ պարոն Ա. Գևորգյանի 2013թ. դեկտեմբերի 4-ի N 01/15/6657-13 հանձնարարականը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1. 2014թ. հունվարի 1-ի դրությամբ, հունվարի 1-ից մինչև 17-ը ընկած ժամանակահատվածում գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր կարգի տնտեսություններում անասունների համատարած հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետներում կատարելու և վիճակագրական տվյալների արժանահավատությունն ապահովելու նպատակով ստեղծել մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի :
2. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել տվյալ համայնքի ղեկավարին և անասնաբույժին:
3. Անասնագլխաքանակի հաշվառումը և արդյունքների ամփոփումը կատարել սահմանված ժամկետում:
4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Է. ՂԱՋԱՐՅԱՆ